Ցաւուր ի որդի Ապրիլի 1719, ի Վենետիկ

Ես Խաչատուր Առաքել Քահանայ, և Վարդապետ

Արդ՝ կամիմ ամենեին, զի իսկոյն յետ մահուան իմոյ ամենայն կամեցեալքն յինէն ի կատար հասուցին, թողլով զհոգւոյս հոգն գերիմաստ ենթադատութեանն Գոմմիսարին իմոյ աստ յինէն կացուցելոյ։ Ցայտ առնեմ ի սմին տեղւոջ, թէ ունիմ առ Գերապայծառ Պարոն Աստուածատրոյ Շահրիմանենց Գոնթին, որդ(ւ)ոց հանգուցեալ Պարոն Մարգարին, ութ հարիւր զօռէնթ տուգաթս. և առ Գերապայծառ Պարոն Յովսէփ Յակոբեան Գոնթին Շահրիմանենց, չորս հարիւր զօռէնթ տուգաթս. իսկ զոչինչ պարտս ունիմ։

Զամենայն գրեանսն իմ յինէն շարադրեալս աստ ի Վենետիկ տպեալս թողում Մենաստանին Միանձանց Հայոց, որ կայ ի Կղզւոջն Սրբոյն Ղազարու։

Զամենայն գրեանսն իմ լատինականս և իտալականս, և համանգամայն երկլեզուս, այսինքն՝ Լատինս և Հայկականս ի միասին, և զուտ Հայկականս յինէն ոչ շարադրեալս, թողում Մարիամու, զստեր Գէորգայ Յոհաննիսեան Կոստանդնուպոլսեցւոյ Հայկազնոյ։

Թողում Եկեղեցւոյ իմում Սրբոյ Խաչի Հայոց, որ է ի Վենետիկ, Ի զօռէնթ տուգաթս մի անգամ ևեթ։

Թողում բուն քեռ իմում, որ է յԱրզրում, Նոյեմ Սառայի, Ի զօռէնթ տուգաթս մի անգամ ևեթ։

Թողում Տիրուհւոյ Լուսիայ Հալաճենց Հայկազնոյ՝ Կոստանդնուպոլսեցւոյ Ի զօռէնթ տուգաթս մի անգամ ևեթ, ի նշան երախտագիտութեան։

Կացուցանեմ և յայտ առնեմ օրինաւոր ժառանգ ամենից պատրաստ դրամոց իմոց, (որոց ութ հարիւր զօռէնթ տուգաթքն, որպէս ասացաւ, են առ Գերապայծառ Պարոն Աստուածատրոյ Շահրիմանենց Գոնթին, որդւոյ հանգուցեալ Պարոն Մարգարին, և չորս հարիւր զօռէնթ տուգաթքն են առ Գերապայծառ Պարոն Յովսէփ Յակոբեան Գոնթին Շահրիմանենց, որպէս ցուցանեն մուրհակքն.) զգերապատիւ Տէր Մխիթար Պետրոսի Աբբահայրն Միանձանց Արամազնեայց Կարգին Սրբոյն Անտոնիոսի Աբբային, և զամենայն յաջորդս նորա. որպէս զի լիցին յաւէժաբար Տեարք ասացելոց Ռ. Մ. զօռէնթ տուգաթիցն, և պտղոց նոցին, այսու պարտականութեամբ ի վերայ նորա և նոցա դրեցելով, զի ի պտղոցն նոցին տպագրել տացեն զաշխատասիրութիւնսն յինէն շարադրեալս. բայց այնպէս, մինչ զի գրեանքն տպագրեցեալք ի նոյն պտղոցն, լիցին բացարձակապէս նորա և նոցա. որպէս զի զգրեանսն և զգինսն նոցին վաճառեցելոց, նա և նոքա արասցեն որպէս ինքեանց հաճոյ իցէ։

Գոմմիսար այսորիկ վերջին կամաց իմոց կացուցանեմ զնոյն վերոյյիշեալ Մխիթար Աբբահայրն, կամ զնորա զոր ոք և իցէ յաջորդսն, որ զկնի մահուան գտանիցի կենդանի։

Հուսկ ապա՝ զվերոյասացեալ Գերապատիւ Տէր Մխիթար Աբբահայրն, օրինաւոր ժառանգ իմ, և միանգամայն Գոմմիսար իմ աղաչեմ, զի ուղղապէս զբնաւսն յինէն աստ յայտ արարեալս լցուսցէ յիւրում ժամանակի ի փառս Ամենակարողին Աստուծոյ, և ի պատիւ Ամենափառաւոր միշտ կուսին Մարիամու և Սրբոցն Աստուծոյ, գիտելով, թէ յիրաւի ընդունելոց է զառատաճոխ վարձս ի պարգևատուէն ամենայն բարեաց, յորմէ և ես հայցեմ նմա զամենայն բարեյաջողութիւն, և զայս զի յերկինս ի միասին կենակից լինիլ մարթասցուք, զերջանիկ և զերանական կեանս վայելելով։ Այսպէս եղիցի, ի զովութիւն Աստուծոյ Ամենաբարւոյ և Ամենամեծի, և ի պատիւ Ամէներանուհւոյ միշտ կուսին Մարիամու և Սրբոցն Աստուծոյ. Ամէն։

Ես նոյնս Խաչատուր Առաքել, յատուկ ձեռամբ հաստատեմ.

ԺԸ.

Դեռ աւելի մանրամասն և որոշ տեղեկագրութիւն մը կ՝ընէ Բարդողիմէոս վարդապետ Հին Ցոմարի փոփոխութեան շուրջ՝ իր հետևեալ նամակով։ Ունի երրորդ